ԱՐՄԱՎԻՐԻ 1987—1988 ԹԹ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Հնագիտական աշխատանքները տարվել են Արմավիրի միջնաբերդի մերձտաճարային համալիրի հարավում, արևմուտքում և հյուսիսում (նկ. 1)։

№ 22 սենյակը, բլրի հարավային լանջին, քաղկացած է դռան բացվածքով հաղորդակցվող երկու բաժանմունքներից՝ ա և բ, ուրվագծվել է դեռևս նախորդ տարիներում։ Այստեղ էին գտնվել էլամերեն լեղվով արձանագրված կավե տախտակները։ 1987—1988 ԹԹ. սենյակում կատարվեցին որոշ ճշտումներ։ Պարզվել է, որ երկու բաժանմունքներն ունեն մոտավորապես նույն չափերը՝ 6,5 մ×3 մ։ 22ա բաժանմունքը արևելքից սահմանափակված է լանջի վրա տեղադրված հյուսիսից հարավ ձգվող հենապատով։



Նկ. 1։

22 բ բաժանմունքի հարավային մասում արևելքից արևմուտք ձգվում են երկու հարակից պատեր (երկ.՝ 6, 35 մ)։ Առաջինից մինչև սենյակի հյուսիսային պատն ընկած տարածքը

լցված է խարամաքարով և սվաղված է։ Այս սվաղը տարածվում է նաև առաջին պատի վրա, թույլ տալով եզրակացնելու, որ սվաղն արված է ավելի ուշ, երբ առաջին պատը կորցրել է իր նշանակությունը։ Զևափոխման էր ենթարկվել նաև երկրորդ պատը։ Նրա հարավային երեսին, արևմտյան ծայրում ձվաձև փորվածք է արված, որը ծառայել է որպես օջախ (տրամ.՝ 1,15 մ)։ Նրանում հայտնաբերվեցին մոխիր, ածխի կտորներ և հելլենիստական դարաշրջանի խեցեղեն բեկորներ։

Տարածքում պեղման ընթացքում հայտնաբերված խեցեղենը խառն է՝ միջնադարյան, անտիկ և ուրարտական։ Սրանցից հետաքրքիր են հատկապես կանթավոր, հաստապատ կարասի բեկորները, որոնք պատված են թանձր կարմիր ներկի շերտով և փայլեցրած։

Մերձատաճարային համալիրի հարավային թևում է գտնվում նաև № 30 սենյակը։ Պեղումներով առայժմ բացվել են նրա երեք պատերը։ Հյուսիսային պատը, որ ամենալավ պահպանվածն է (բարձր.՝ 2,3 մ), հարում է նախորդ տարիներին ուսումնասիրված միջանցքի (№ 3) հարավային թևին։ Արևմտյան պատը միջանցքի արևմտյան պատի շարունակությունն է կազմում։ Արևելյան պատը ընդհանուր է № 15 սենյակի հետ։ Սենյակի պատերը, հատկապես արևելյանը և արևմտյանը շատ են տուժել միջնադարյան հորերի, իջվածքների պատճառով։ Սենյակի լայնությունը 4,5 մ է։ Պատերի հաստությունը՝ 2,8 մ, իսկ բացված մասի երկարությունը հասնում է մինչև 8,5 մ-ի։ Սենյակը տեղադրված է բլրի խեստ թեք լանջն, ուստի նրա հյուսիսային պատի հիմքերն ավելի բարձր են։ Արևելյան և արևմտյան պատերի քարե հիմքերը ռելիեֆի թելադրանքով աստիճանաձև իջնում են ներքև։ Այս սենյակում միջնադարյան շերտը շատ խորն էր, օրինակ, հյուսիս-արևմտյան անկյունում հասնում էր մինչև պատի քարե հիմքերը։

Սենյակի հյուսիսային մասում խորացել ենք մինչև 2,2 մ։ Պատերի և լիցքի մեջ երևում են հրդեհի հետքեր։ Դրանք սկսվում են 0,7 մ խորությունից և հասնում են մինչև 1,5 մ, որից հետո սկսվում է կավահողի նոր շերտը, առանց հրդեհի հետքերի։ Եվ քանի որ սենյակը ավարտված չէ, ուրեմն այս հրդեհը ոչ թե ուրարտական ժամանակաշրջանի է, այլ ավելի ուշ։ Հետագա պեղումները կպարզեն այս հարցը։

Հարավային մասում բացվեցին միջնադարյան կառույցների հետքեր՝ մի պատ, որի մեջ երևում է ուրարտական մի քար՝ մկրատաձև բնով, ապա քարերի կուտակումներ, հարթակի կամ պատի այլ մնացորդներ։ Դրանց տակ լավ երևում է ուրարտական վառված շերտը։

Սենյակի մեջտեղում հատակին բացվեց քարե ծորանով դուռ, գորշավուն կարծր տուֆից (երկ.՝ 0,94 մ, լայն.՝ 0,74 մ, բարձր.՝ 0,42 մ)։ Դուռը հյուսիսային պատից՝ հեռու էր 2,45 մ, արևելյան պատից՝ 2,10 մ, իսկ արևմտյանից՝ 1,45 մ։ Դուռը զանգվածեղ է, դրսից ավելի կոպիտ մշակված և ունի ներսի կոնֆիգուրացիային համապատասխան տեսք (նավակի նման)։ Նրա տարողությունը այնքան էլ մեծ չէ։ Դուռի չափերն են. երկ.՝ 0—94 մ, լայն.՝ 0,74 մ բարձ.՝ 0,42 մ։ Դուռի միջից գտնվեց ուրարտական թասի մի բեկոր, իսկ նրա ծորակից՝ երկու այլ բեկոր։

Ինչ վերաբերում է հնագիտական նյութին, ապա ուրարտական ժամանակի առարկաները հանդիպում են բնականաբար ստորին շերտերում. դրանց մեջ աչքի են ընկնում կարմիր փայլեցրած մեծ սափորի պսակի մասը՝ երեքնուկաձև շրթերով և կանթի զրոշմազարդ մի բեկոր, ինչպես նաև բրոնզե շքամեխ-զիդատին (նկ. 2,3)։ Ավելի սակավաթիվ է անտիկ ժամանակաշրջանի նյութը. կան կավանոթների դոտեզարդ բեկորներ։ Երկաթե քառանիստ տեղի ծայրը կարող է նույնպես այս դարաշրջանին պատկանած լինել։ Բազմաքանակ է միջնադարյան նյութը։ Հասարակ սև և բաց դույների պսակների և հատակների բեկորներ, կապույտ, կանաչ, մանուշակագույն, ջնարակած բեկորներ, հատկապես դանվեցին արևմտյան պատին կից բացված թոնրի շրջապատից։ Շատ հետաքրքիր է կավե ծակոտկեն կճուճ-քամիչը, որը բավական բնորոշ տեսակ է միջնադարյան Արմավիրի համար։

№ 23 սենյակի արևելյան մասի պեղումները սկսվել էին դեռևս նախորդ տարիներին։ Այս սենյակը գտնվում է մերձատաճարային համալիրի հյուսիսային հատվածի՝ միջանցքից հյուսիս տեղադրված սենյակների երկրորդ շարքի, մինչև այժմ պեղված ծայր արևմտյան մասում։ Այն № 14 բաժանարար սենյակից արևմուտք տեղադրված երրորդն է և մյուս երկու սենյակներից տարբերվում է միայն չափերի փոքրությամբ (սովորական 5 մ×2,5 մ-ի փոխարեն 4,15 մ×2,5 մ)։ Սենյակի արևելյան պատը № 19 սենյակի հետ ընդհանուր է, և դրանք միացնող մուտքը այդ պատի հյուսիս-արևելյան անկյունում է տեղադրված, միևնույն առանցքի վրա այդ շարքի սենյակների մուտքերի հետ։ Մուտքի բարձրությունը 1,55 մ է, լայն.՝ 0,8 մ։



Նկ. 2

Սենյակի վերին շերտերի վրա նստած էր միջնադարյան տնտեսական նշանակության շինություն՝ մի քանի հորերով, թոնիրներով, կարասների հետքերով։ Միջնադարյան կառույցի հյուսիս-արևելյան պատի մեջ տեղադրված դուռը բացվում է ուրարտական սենյակի մեջ։ Սենյակի հարավային և արևմտյան պատերը միջնադարյան սենյակի հատակի մի մասն են կազմել։ Միջնադարյան շերտը հեռացնելուց հետո միայն հնարավոր եղավ ուրվագծել ուրարտական սենյակը։ Տեղանքի ռելիեֆի թեքության պատճառով սենյակի արևելյան մասը ավելի լավ էր պահպանված, քան արևմտյանը։ Այս սենյակը ենթարկվել է մյուսների ճակատագրին։ Հրդեհի և ավերվածության հետևանքով այն լցված էր աղյուսներով, ածխի և գերանների կտորներով։ Արևելյան պատի վրա վերևում պահպանվել են դռան բարակալի, պատի մեջ ադուցված զերանի բեկորները և բարակալի վրա դրված աղյուսները։ Սենյակի աղյուսե պատերը դրված են 1—1,2 մ բարձրության քարե հիմքերի վրա։ Հատակը հարթեցված է խարամաքարերով և սվաղված է։ Հատակից 0,3 մ բարձրության վրա տեղադրված է դռան շեմը։

Սենյակը ամբողջությամբ լցված էր մոխրախառն հողով, այրված աղյուսների բեկորներով։ Սրանց միջից էլ դուրս էին դալիս նյութական մշակույթի մնացորդներ, խեցեղեն, երկաթե գործիքներ, ցածր ոտքերով քարե սկահակ՝ հար և նման մինչ այդ Արմավիրի պեղումների ընթացքում հայտնաբերված օձաքարե, պրոֆիրիտե և այլ քարատեսակներից պատրաստված սկահակներին։ Սենյակի ողջ տարածքով հայտնաբերվեցին նաև այրված կորեկի մնացորդներ, կապույտ ներկի բեկորներ և այրված ծծմբի կտորներ։

№ 26 քառակուսու հարավային մասը մաքրվել էր դեռևս 1986 թ., և 19-րդ սենյակի հյուսիսային պատին կից բացվել էր խճաքարերից կազմված մի հարթակ։ Աշխատանքները կենտրոնացվեցին այս հարթակից ցած ընկած մասում։ 2,10 մ հեռավորության վրա բացվեց բազալտե քարերից շարված արտակարգ կանոնավոր պատի մի հատված (երկ.՝ 6,6 մ), որը շարունակվում է թե դեպի արևելք, թե արևմուտք։ Ուրարտական այս հաստաբետ պատի առջև բացվեց 10 մ լայնքով մի հարթ տարածություն՝ լցված խարամաքարի մանր ու միջին կտորներով։ Այս լիցքի հաստությունը 0,5—0,6 մ է։ Տարածքից հայտնաբերված նյութական մնացորդները առատ չեն, խառն են, և գերակշռում է միջնադարյան նյութը։

№ 27 սենյակը հյուսիսից, արևելքից և հարավից հարակից է № 31, 12 և 17 սենյակներին։ Պարզ չէ նրա արևմտյան պատի հարցը։ Սենյակի ողջ տարածքը ենթարկվել է ավերածություններ միջնադարում և XX դարում։ Սենյակի հյուսիսային պատը խաթարվել է միջնադարյան շատ մեծ հորի (տրամ.՝ 1,8 մ) կազմակերպման ժամանակ։ Նույն ձևով աղճատվել են նաև արևելյան և հարավային պատերը։ Նյութերն այս սենյակում գտնվում են խառը վիճակում, առանց շերտագրական օրինաչափությունների։ Նույն ճակատագրին է ենթարկվել հարևան № 31 սենյակը, որի երկու պատերն են բացվել։ Հարավայինը (երկ.՝ 5 մ) մտնում է սենյակի արևմտյան մասի վերևում տեղադրված միջնադարյան քարե պատի տակ։ Արևելյան պատը մոտ 4,5 մ հեռավորության վրա թեքվում է ուղիղ անկյան տակ և կազմում ելուստ (0,46 մ), որը շարունակվում է դեպի հյուսիս։ Պատերը, ինչպես նաև սենյակի ներսի մասերը, խաթարված են միջնադարյան թոնիրների, հորերի, անգամ թաղումների հետևանքով։ Սենյակի տարբեր մասերում հանդիպում են քարե կուտակումներ, որոնք խանգարում են պեղումներին։ Սենյակի շերտագրական պատկերը բավական խառն է, ուրարտական նյութը երբեմն դուրս է դալիս վերևի շերտերից, իսկ միջնադարյանը շարունակվում է մինչև սենյակի խորքերը։

Սենյակում հայտնաբերված խեցեղենը ներկայացված է նախ և առաջ ուրարտական խոշոր և հաստապատ անոթների բազմաթիվ բեկորներով։ Դրանք, այնուամենայնիվ, այնքան էլ շատ չեն, որպեսզի ամբողջացվի գոնե մի կարաս։ Հանդիպում են նաև ավելի փոքր կարասների շրթերի բազմաթիվ օրինակներ, ինչպես նաև կարմիր փայլեցրած թասերի բեկորներ։ Անտիկ խեցեղենը ներկայացված է կոնքերի, թասերի, ծորակավոր և քթիկավոր անոթների հասարակ գոտեզարդ բեկորներով։ Միջնադարը ներկայացված է մոխրագույն և սև կճուճների բեկորներով։ Պետք է առանձնացնել նաև մի քանի յուրահատուկ ձևերի կավանոթներ։ Մի անոթը պայմանականորեն կարելի է համարել խորանարդաձև (№ 2,1)։ Այն ունի կարասներին հատուկ պսակ. հաստ և կլորավուն շուրթը դեպի դուրս է հակված։ Վիզը լայն է ու ցածր։ Պահպանվել են արկղ-կարասի վերևի բավականին մեծ մասը, ինչպես նաև կողերի բեկորներ։ Հատակը չի պահպանվել։ Անոթը օխրագույն է, սև խայտերով։ Անոթի պահպանված չափերն են. երկ.՝ 35 սմ. լայն.՝ 24 սմ, բարձր.՝ 12,5 սմ, բերանի տրամ.՝ 22 սմ, ներսինը՝ 15 սմ, պսակի

բարձր.՝ 5,5 սմ)։ Նման անոթներ հանդիպում են ավելի վաղ ժամանակներում, բայց ավելի փոքր չափերի են։

Շատ հետաքրքիր է սենյակի հարավային պատին կից բացված կրակարան հիշեցնող կավե անոթը (նկ. 2,4)։ Նրա պատերը ստորին մասում հարթ կտրած են՝ անոթը հարմար կանգնեցնելու համար։ Դեպի վեր աստիճանաբար նեղացող կլորավուն պատը ուղիղ էր և հենված սենյակի պատին։ Ստորին մասում կողքից ունի թոնիրների ակ հիշեցնող պայտաձև բացվածք։ Դժվար է ասել, թե ինչ ավարտ է ունեցել նրա գագաթային մասը։ Սակայն ընդհանուր տեսքը, ստորին մասի նշված բացվածքը առարկային մերձեցնում են հնադույն ժամանակներից հայտնի կրակարաններին, ինչպիսիք հայտնաբերվել են Գառնիի բրոնզեդարյան։ Դվինի վաղ երկաթի և Արդիշտիխինիլիի ուրարտական շերտերից։ Իրի կավի բաղադրությունը և մշակման առանձնահատկությունները, նրա հարևանությամբ գտնված հնադիտական նյութը, այդ թվում և հելլենիստական ժամանակաշրջանի գյուտերը, թույլ են տալիս այն վերագրել հելլենիստական կամ մի փոքր ավելի վաղ ժամանակաշրջանի։ Այս կրակարանից մի փոքր հեռու, մեկ բահաշերտ ցած, սենյակի հարավ-արևելյան անկյունում բացվեցին ուրարտական մեծ չափերի եռանկյունաձև փորվածքների շարքերով հարդարված կարասի բեկորներ։

Մոտ 1,50 մ խորության վրա գտնվեց «փյունիկյան» տիպի մի ապակե սրվակ (նկ. 2,2)։ Այն ալաբաստրոնաձև անոթ է, դրսից՝ նիստավոր։ Անոթը դեպի ներքև թեթևակի լայնանում է։ Վերևի մասը, վիզը, շուրթը և ունկերը բացակայում են։ Հատակը կլորավուն է։ Նման անոթները պատրաստվել են մետաղե ձողի, կավե և ավազի միջուկի օգնությամբ, որի վրա հագցնում էին հալած ապակու զանգվածը, որը ստանում էր ապակեգործի ցանկացած ձևը։ Ապակյա զանգվածի վրա հյուսվում էին ապակյա թելեր, որոնք մշակման ընթացքում կպչում էին իրանին կամ մտնում նրա մեջ, որով ստացվում էր փետրաձև կոչվող զարդ։ Սրվակը պատրաստված է սև գույնի ապակու զանգվածից և բաց-կապտավուն ապակյա թելերից։ Նրա բարձրությունը 3,9 սմ է, լայնքը՝ վերևում՝ 1,3 սմ և ներքևում՝ 1,5 սմ։ Նման սրվակները, անգամ չընչին տարողությամբ, ծառայում էին օծանելիքների պահպանման և փոխադրման համար։ Այս տեխնիկայով պատրաստված անոթներն ունեն շատ հին պատմություն։ Դրանք պատրաստվում էին դեռևս մ. թ. ա. II հազարամյակում՝ եգիպտոսում, Ասորիքում, Փյունիկիայում և արևելամիջերկրական այլ կենտրոններում։ Նման սրվակները հատկապես մեծ տարածում գտան հելլենիստական ժամանակաշրջանում։ Սակայն ինչպես մատնանշում է հին ապակու ճանաչված մասնագետ, պատմական գիտությունների դոկտոր Նինա Սորոկինան, նման սրվակները ծառայում էին ծարիրի պահպանման համար և թվագրվում են մ. թ. ա. I հազարամյակի կեսերով՝ V—IV դարերով[1]։ Արժանահիշատակ է այն փաստը, որ Արմավիրում աճում է այդ դարերով թվագրվող առարկաների քանակը։ Դեռևս նախորդ տարիների պեղումների ժամանակ Արմավիրում հայտնաբերված մահիկաձև ոսկե կրծքազարդը, կավե ցլակերպ պտյակը, խեցեղենի որոշ նմուշներ կարող են թվագրվել նույն ժամանակով, ավելի ճիշտ՝ մ. թ. ա. IV դարով։ Եթե այդ այդպես է, ուրեմն հնարավոր է նշված իրերը կապել Արմավիրում Երվանդ III-ի գահակալման հանգամանքների հետ։

№ 29 սենյակը (կամ քառակուսին) պեղվեց հյուսիսային սենյակաշարի արևելյան ծայրին՝ № 25-ի հարևանությամբ, պարզելու համար, թե արդյոք շարունակվո՞ւմ է սենյակների շարքը։ Այստեղ 25-րդ սենյակի հարավային պատի քարե հիմքերը շարունակվում են և կազմում որմնահեց։ Այս որմնահեցից դեպի հյուսիս ձգվում է մի պատ, որը ռելիեֆի թելադրանքով աստիճանաձև իջնում է հավանաբար մինչև պարիսպը։ Այն շարված է բազալտե ճեղքած քարերից և լցված է խարամաքարով, առաջացնելով 2,5 մ×2 մ մի հարթակ։ Այս հարթակից արևելք լայնացնելով քառակուսին՝ հարավային ուղղությամբ մաքրվեց որմնահեցով պատի արևմտյան երեսը։ Այն շարված է խոշոր բազալտե քարերից, որոնց վրա բարձրացված է եղել աղյուսե վերնամասը։ Ողջ պատը լավ սվաղված է եղել վերից վար։ Այս պատից 2,45 մ հյուսիս մի աստիճանաձև պատ բացվեց (երկ.՝ 2,40 մ)։ Այն ևս կառուցված է բազալտե քարերով և սվաղված է կավով, սվաղը տարածված է նաև առաջին աստիճանը արևելյան կողմից սահմանափակող խարամաքարի վրա։ Պատը եռ-

---

[1] Dan Barag. Rod-formed kohl-tubes of the mid-first millenium B. C. (Journal of Glass studies, 1975, vol. XVII, p. 23–36)

[2] Г. А. Тирацян. Золотая пектораль из Арджавира (Советская археология, 1968, № 4, с. 190—198). Գ. Ա. Տիրացյան, Ի. Ա. Կարապետյան, Արմավիրի 1985—1986 թթ. պեղումները (Պատմա-բանասիրական հանդես, 1988, № 3, էջ 224—225)։

աստիճան է։ Ցուրաքանչյուր աստիճանի բարձրությունը 0,5—0,65 սմ է, լայնքը տատանվում է 0,2—0,3 մ-ի միջև։ Այս աստիճանաձև պատը ավարտվում է բաղալտե քարերով, որը հատվածի խորությունը 2,2 մ է։ Այստեղ վերևից ներքև թափված հողի մեջ հաջորդաբար հայտնաբերվում էին բոլոր երեք հիմնական ջերտերին վերաբերող խեցեղեն մնացորդներ,



Նկ. 3

շարունակվում է քե դեպի արևելք, քե դեպի արևմուտք և ունի 0,4 մ բարձրություն։ Պեղված

ինչպես նաև ուրարտական որմնանկարների մեջ օգտագործվող բոլոր գույների (կարմիր, կա-

պույտ, սպիտակ, սև) հետքեր կրող ծեփի շատ փոքր կտորներ, որոնք հավանարար պետք է վերաբերեին դագաթում գտնված շենքին։

Աշխատանքներ են տարվել նաև բլրի հարավ-արևմտյան լանջում՝ պարսպից ներքև, այսպես կոչված խորշաձև կառույցի մոտ։ Այն հարթեցված ժայռի մի երկար շերտ է, որը երկու կողմից եզրափակվում է երկու նույնպես հարթեցված և ուղիղ անկյան տակ դտնվող թևերով։ Ստորին մասում ժայռը մշակված է նստարանաձև և եռ ողջ տեսքով հիշեցնում է բլրի արևելյան ծայրի, շրամբարի մոտի ժայռափոր կառույցները։ Կառույցի ընդհանուր երկարությունը 15 մ է (14,85), բարձրությունը՝ 2,80—3,40 մ, թևերի երկարությունը՝ 1,5 մ և 3 մ։ Նստարանի բարձրությունը 0, 60 մ է, խորությունը՝ 1,15 մ։

Կառույցի արևելյան մասի առջև փորձեցինք մաքրել ժայռը՝ շինարարական որևէ հետք դտնելու համար, սակայն բացվածը բնական ժայռն էր, չնայած այն տեղ-տեղ թողնում է աստիճանաձև մշակված լինելու տպավորություն։ Այստեղ ժամանակի ընթացքում կազմավորվել էր հողի մի շերտ, որի մեջ պահպանվել էին հնագիտական նյութեր՝ հիմնականում խեցեղենի, ինչպես նաև քարե աշխատանքային գործիքների մի քանի բեկորներ։ Խեցեղենը խառն է, ընդհանրապես այն տպավորությունն է ստեղծվում, որ այն վերևից թափվել է անձրևաջրերի հետ ու կուտակվել այստեղ։ Խեցեղենը հասարակ է, անկերպար, ուրարտական խեցեղեն չկա, կա անտիկ շրջանին բնորոշ մի փոքր խումբ։

Կառույցից դեպի արևմուտք դտնվող ժայռի մեջ կորաձև առու է փորված։

Ջրաշեն գյուղի գերեզմանոցում, որը գտնվում է երկրորդ բլրի արևմտյան լանջին, թաղում կատարելիս ի մի է հավաքվել դուրս եկած խեցեղենը։ Տեղանքի զննումը թույլ է տալիս խոսել այստեղ հնագիտական շերտի գոյության մասին, որը ծածկվել է լանջերից ներքև հոսող խճի տակ։

Խեցեղենը անտիկ դարաշրջանին խիստ բնորոշ մի հավաքածու է, բայց հանդիպում են և ուրարտական բեկորներ։ Հանդիպում են կարասների, կոնքերի, տաշտերի, թասերի բնորոշ ձևեր, սափորների կանթեր և այլն։ Ուշադրության է արժանի կարմիր փայլեցրած սափորի բեկորը՝ վրան փորագրված շրջանակով։

Հողհարթեցման աշխատանքներ կատարելիս Հայկավան գյուղի կոլտնտեսության հողատարածություններում, Արմավիր բլրի արևելյան ստորոտում՝ Արմավիր-Նախիջևանյան խճուղին գերեզմանատանը միացնող ճանապարհի և հին ու նոր շրանցքների անմիջական հարևանությամբ գտնվեց բաղալտե մի սալ։ Սալի լավ հարթեցված երեսին փորված է 15 տողից բաղկացած սեպագիր արձանագրություն (նկ. 3)։ Հակառակ կողմը նույնպես մշակված է և ունի մակույկի ձև, քարե պատի մեջ ագուցելու համար։ Սալի երկարությունը 0,50 մ է, լայնությունը՝ 0,35 մ։

Արձանագրությունը դրոշմված է Սարդուրի II թագավորի անունից և հաղորդում է նրա կառուցած մի շարք շինությունների՝ Բարձուդիբիդունի շենքի և երկու արի-ների մասին, ամեն մեկը՝ համապատասխանաբար 12000 և 8000 կապի տարողությամբ[4]։

Արմավիրի պեղումները շարունակվում են։ Նրանք հաստատում են հուշարձանի բազմաշերտ բնույթը և բացահայտում նրա նշանակությունը հին Հայաստանի պատմության և մշակույթի համար։

Գ. Ա. ՏԻՐԱՑՅԱՆ, Ի. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

---

3 Քարը գտել և պահել են՝ Ռաֆիկ Մելքոնյանը, գյուղատնտես Յուրա Հովսեփյանը և բրիգադիր Մեջիդ Սմոյանը։

4 Սիմոն Հմայակյան, Նոր ուրարտական արձանագրություն Արմավիրից (ՀԽՍՀ-ում 1987—1988 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, Երևան, 1989, էջ 50—51)։